

դիւնս Հայրաբար, որով ոչ սակաւ ավտիւցան սիրտք մեր ճմլեալք, ապա եւ կատարեալ գլարգ օծման Հանգուցելոյս ըստ արարողութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ :

Եկ աստեւ աղաչեմ եկ քնարանարդ Դաւիթ եւ նիստ խոզողմս, լաբան՝ ուղղեն գրնարդ տասնադի, զի անա զաջս իմբ ատեալ՝ տեսանեմ խուրք Սեղանն Տերունի զի կարգակատարք նեղձամոգձով լեալ յարտասուս չգօրեն ըստ այլում պահու պաշտել զկարգ. եւ ամենայն միաբանութիւնս նոցա նամաձայն, անպատմելի նեկեկանօք զարտասուաց զետս իջուցանեն յաջաց:

Աստեւ գունդ երախտագիտացն խոնարհ ակնարկութեամբ սուգ զգեցեալ դառն վշտօք նոգւոց նանն: Անդէն գումարք տերունականաց զմայլեալ սրտարեկ ձայնիս զողոթ յօրինեն: Ո՛ր բողից զպատկառելի ցաւակցութիւնս օտարազգացն, որ միանգամայն իխոր սրտե ցաւակցորդ առնէին զանձինս իւրեանց, նմանեալ մեզ յամենայնի:

Ո՛վ անակնկալ աղետիցս՝ եւ տարապայման ցաւոցս: Զի ե ինձ աստեւ նեղձամոգձով զոլ՝ եւ ոչ մոխիր զզլխով արկանել. զի անա յանկարծանաս ընդ մահ բարերարիս կեամ լերդակեզ խարշատեալ սակս անդառնալի նրաժարման աստուածաբեալ երախտաւորին իմոյ. եւ զիմրդ ոչ զուգաձայնիցին ամենեքին իմի. զի օր ողջախորհուրդ իցե, որ ընդ տեսանել զայսպիսի նոջակեալ այրն զիսկնացեալ ինեքքոյ ոտից մահու.՝ ոչ արտասուիցե: Ո՛վ ողորմելի տեալ, ով արարիչ իմ, զի անա ըստ անսուտ բանիդ նարկ ե մեզ մեռանիլ, զի լցցի վճիռ սահմանադրութեան ամենակալիլ:

Բնրե անհասութեանս, զի ե ինձ վայրապար մտանել զնիտ, զի երբ կարացից բորովախօս լեզուս լուսարանել զհանգամանօ նորա զառաքինութեանցն. զիմրդ կարացից ստուերազրել զսորայն խորին խոնարհութիւնս, որ նանապագ նայրաբար ընդ ամեցուն կինցաղափարե: Եւ օրպես նանգանակեցից զնորին նեղութիւնս՝ որ ընդ մեծամեծս եւ ընդ փոքունս նոգելից եւ բարոյական բանիւք սիրաշաներ: Եւ զիմրդ կարացից զսորին երկայնամիտ նամբերութեան զպարագայսն բացատրել, որ իբառաստուն եւ նինքն ամաց նետե նեղութեամբ: Ո՛ր բողից պատմել զամենայն քրիստոնէական բարեմասնութեան զքաջագործութիւնսն ըստ աւետարանական կատարելութեանց « Եղերութ կատարեալ »:

Այլ եւս շատ նամարեալ զամենայն ձիրս բացատրել նանգուցելոյս միայն ակնարկութիւն մեր յառեցի ինայնիլ առաքինազարդ վարուց սորա, յոր բե ոք միանգամ նայեցի՝ զօտակինդ յագեցի. զի անուանակցի իւրոյ նախամարգարէին ջանայր զոլ նմանօղ որքան կար իւր տաներ: Ո՛վ պանծալի անունդ Դաւիթ, խորհրդաբար ննգօք տառիւք պատուեալ, զուգարիս ննգից քարանցն. զորս յանուն նանապետացն ատեալ տաներ ընդ իւր մատաղ մարգարէն իղաշտ մարտի, որ զետեղեալ զմին ինոյն քարանցն իմեջ բեռնց պարսին, նեղութեան եւ խոնարհութեան, զորոց կախեալ կայ կեանք տերունականացս, եւ ուժգնակի նարեալ ինձակատ սկայազօր ամբարտակին յերկիր կործանեաց: Անա ստանձնեալ նանգուցեալս ըստ նրաշալի անուանն եւ զգործ սիրոյ, նանգուցեալ ունեք զսիրտ իւր ընդ քաղցր նովանաւորութեամբ նեղութեան եւ խոնարհութեան, որով յաղթող նանդիսանայր բռնաւոր զգայարանացն ննգից բեյաղորութեան, իւրոյ նեղութեան եւ խոնարհութեան պարսաքարին, եւ զգետներ իբրեւ գԴաւիթ զիւր բշնամին նանապագ. եւ անա « Այսպէս օրննացի ամենայն մարդ, որ երկնքի ի Տեառնէ:

Անոց որդեգրելոցս զերառեալ զանիս, զի անա բռնութիւն մահու խկալ զայսպիսի այր առաքինի իմիջոյ խաղացոյց. որքս բողեալ զմեզ զամենեւեան: Եւ անա այսպէս ծաղկափրբ օրննեցաւ իկեանս իւր իբրիստոս նանգուցեալս. եւ այսպէս ճմլեցաւ աստուածային բանիս պարարտացեալ ողկոյզս այս ձեռամբ Տեառն Ամենակալի ի Հնձան սուրբ Եկեղեցւոյ իցաւ:

քաղցեկեղ, ինասակի 63 ամի: Քաջ Հովիւս եւ նաւատարիմ աշխատաւորս Ս. Արոտոյս սրբոց Յակովբեանց մատուցեալ զինի անապակ բաժակ իձեռնին երկնաւոր փեսային ի նարսանիս Դաւիթն: Անոց զրկանացս եւ կորստեանս:

Դիտէք արդեօք սրտակից եւ ցաւակիցք իմ զինչ կորուսաք եւ զինչ իմնչ մահն յափշտակեաց. մի բե բնչին ինչ ե կորուստն մեր եւ կամ դիւրաստափնալի. ոչ, ոչ. կորուստն մեր ե կորուստ բնաշխարհիլ, նագուագիւտ, եւ անգտանելի. զինչ իցե այս. կրկնելն դառն յիշատակութիւն ե ինձ. սակայն ասացից. մի խարէք զանձինս, զի զմարդ կորուսաք՝ եւ այն ոչ իտասանց զմին կամ ինարիւրոց, այլ ինագարաց զայրն Աստուծոյ կորուսաք. զոր երե առ իգտանել ճրագաւ քննեցուք (զերուսաղիմ) եւ անի ածցութաշխարհի ոչ ուրեք երբեք գտանել կարեմք, զի զնաց մարդն իտուն իւր յափտեցից, դարձ արար անձն նորա ինանգիստ իւր զի Տէր կոչեաց զնա. ուրեմն « Երանի մեռելոց որք իտեք ննչեցին ». եւ անա վասն այսր մահու ասե մեղուն արարատեան, Եղիշէ սուրբ վարդապետն. « Մահ, ոչ իմացեալ, մահ ե. մահ իմացեալ ամաճութիւն. որ զմահ ոչ զիտե, երկնքի իմաճուանե. եւ որ զիտե զմահ, ոչ երկնքի իմաճուանե »: Եւ անա Հանգուցեալս այս քաջ գիտելով իկեանս իւրում յառաջ քան զմեռանիլն նանգեաւ այսօր յաստի կեանաց ըստ այնմ « խաղաղութեամբ յայս » եւ խոյն տապանի ննչեաց « այս սիրելի բարեկամս Քրիստոսի մինչեւ իգալ նրաման զարքուցանել զմեռեալս ասելով « Արիք մեռեալք » ... Եւ ընդ ասել երկնաւոր վարդապետին « Եկայք օրննեալք Հօր իմոյ » արժանի արացեզ զսա ասել « Անա եւ, եւ մանկուքք իմ, զորս ետուր ինձ »:

Տացուք ուրեմն ապա եւ մեք սմա զողջոյնն վերջին նրաժարակն խուրք սրտե. եւ շուրջ պատեալ փարեցուք զփառազարդ դագաղասն իրախիմ սգալի ասելով աղեկաւոր սրտիս եւ կարողին սիրով, Հանգիր ի Տէր Հայր մեր նոգեղօրով. Հանգիր ի Յօյնս բնաւից ծառաեալ Հօգւոյն սուրբ տեսութեան, զի իյանկողնիլ բազում անգամ աղաչէր « Տէր իմ Յիսուս Տէր իմ Յիսուս, բերեալոց զցառս իմ, Տէր իմ Յիսուս » Անա ոչ բե միայն բերեալոց, այլ իյափտեցից նանգիստն նրաւիրեաց:

Դու նանգուցիչդ նամայնիցս ամենատեղ Գրկիչ ըստ վկայութեան անսուտ բերանոյդ, որպէս ասացեր « Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես նանգուցից զձեզ » եւ անա առ Քեզ զիմեաց ըստ կոչմանդ նանգուցեալ Հայրս մեր բողեալ զմեզ որքս ուրեմն աղաչեմք զամենախնամ Տերութիւնդ նամայն ուխտիւքս աղաչեմք, առ ընկալ զվաստակաւորս զայս եւ « Հանգո իմնչ զնրաժարեալ նոգիս յիօրնաստեղեան լուսեղեն խորանօղ, ուր ժողովք են սրբոց իխաղաղութեան նոգով նեղութեան իրկից բարութիւնս. Ամեն:

Միաբան սրբոյ ուխտիս սուրբ Երուսաղեմի

ԵՍՍՅԻ ՎԱՐԴԱՊԵՏ

Խուրք Երուսաղեմ ի 16 հոկտեմբերի 1858.

ԳՕՄԻՍ Տ. ՅՈՎՀԱՆՆԵՒՍ ԶԱՐԱՆԵԱՆ. Այս պատուական ազգասիրին նետեալ մեկ նամակը կնադորդեմք ազգայնոց, իցոյց լուսաւոր եւ ջանասեր ազգասիրութեան մեր մեծարգոյ բաժանորդին:

Պերսպոլիս եւ Ազգասէր Սուրբ Հայր

Ըստ կանխաձանոց յայտարարութեան Զերոյ նաճութեամբ սրտի կարդալով Գերապատիւ Տէր Սարգիս Վարդապետին ուղեւորութիւնը ի Պօլիս, եւ Ամենապատիւ Տէր Գաբրիէլ Վարդապետին այցելութիւնը ի Նոր Նախիջեւան, մեծամեծ



յոյսերով մխրարունցանք, եւ մաղբեցաք իՏեառնէ պարգեւել նոցա եւ Ձեզ երկայնաձիկ եւ գոարբ օրեր, որպէսզի անարգել եւ անաղօտ կարենաք պայծառ փայլելու իբրեւ մէյմէկ արեգակունք, յորոց Հայկազուն սերնդոցս համար նոր դար մը սկսաւ գիտութեան եւ իմաստութեան :

Իսկ Գերապատիւ Տ Խորեն Խ. Վարդապետին բանաստեղծութեանց վրայ գալով՝ մեծ ուշադրութիւն եւ զարմանք արբերցուցին քէ մերայնոց եւ քէ օտարաց սրտին մէջ մեր ազգային քերթողին վրայ, իբրեւ զի այդպէս վառեալ ոգւով զՀայրենեաց սէրը կերգէ : Եղո՛ւկ միայն որ տեղւոյս Հայկազանց, եւ մանաւանդ արուսեաց սեռին՝ նշանազորով եւ կանոնաւոր երաժշտութեան արուեստը անծանօթ ըլլալով՝ սոյն բանաստեղծական երգոց քաղցրութեան ճաշակը առնել փափաքողացս ալ հարկ կըլլայ օտար դաշնակ զարնողներու վազել. քեպետեւ անոնք ալ մեր լեզուին ծանօթութիւն չունենալով, եւ միայն Գաղղիարեն բարգմանութիւնէն ճաշակ առնելով, երգելու համար կոյզնին կտազնապին ոմանք Լենկերն եւ ոմանք ալ Ռւպաներն գրերով զՀայկական հնչումը գրել, որ խիստ զժուարին է :

Ուստի եւ ես ալ իմ կողմանէս անոնց դիւրութիւն մը ընելու մտօք, եւ մեր տղայոցն ալ սոյն երգոց ձայնը ուսուցանել տալու բաղձանօք մտածելի որ Գերմաներէն գրերով հայկական բանաստեղծութեանց հնչումը գրեմ, որպէսզի օտարազգիք հնչել կրնայով՝ մեր տղայոցն ալ դիւրին գալ սորվելու. եւ անա այս ցանկալի առարկայիս մէջ այսչափ զժուարութիւններու պատահելով՝ շատ կցաւիմ որ ես ալ կարգաւորեալ եւ նշանազորով երաժշտութիւն չեմ ձանջնար. քեպետ եւ ըստ հին սովորութեան ձայներգութիւնը փոքր իշատէ ձանջնալով՝ սիրելի է ինձի միշտ եկեղեցւոյ արարողութեանց մէջ երբեմն զործածել :

Գերապատիւ Հայր, իրաւացի է Ձեր խորհրդածութիւնը որ երէ ազգայինք պատշաճաւոր օգնութիւնը ընէին Ձեզ, եւ այդպիսի դրամական նեղութիւն չքաշէիք նե՛ որ իշ ինչեր կրնայիք ընել. այդ արդար խօսքերնուդ նոյն իսկ Ձեր բազմադիւն աշխատութիւննիդ է յայտնի ապացոյց, որոց երկինք եւ երկիր կլկային, եւ ամբողջ ազգիս լրութիւնն ալ չկրնար երբեք ժխտել կամ ուրանալ : Ամսոս միայն որ վայելուք վարձատրութիւնը դեռ չեն կարող ընձեռելու ազգասիրական վաստակոցդ :

Բայց ինչէն կըլլայ արդեօք, միքէ ապրիստութենէ՛ եւ կամ իջսիրելոյ. քանիբեք. ո՛ր ո՛ր. այլյանծանօթութենէ գիտութեանն գլխաւորապէս, զոր սակաւք ոմանք միեջեւ ցայժմ կճանաչեն ազգիս մէջ : Բայց մենք, մի Գերապատիւ Հայրք, փառք տանք Աստուծոյ, որ ազգերնիս գիտութեան մասին այսպէս կարենակեր տղայ ըլլալովն անգամ եւ միանգամայն եւս անիշխանութեան մէջ զոյլով՝ միշտ յառաջադիմութեան ճամբուն մէջ կգտնուի առ համեմատութեամբ առաջին ժամանակացն եւ օր ըստ օրէ աւելի ալ յառաջանալու մեծ յոյս կայ խնամք Տեառն, մանաւանդ ազգասէր Սուրբ Հարցղ անխոնջ աքնութեամբ եւ անձնատուր զոնրովը :

Ուրեմն այսպիսի յոյսերով եւ ալ մխրարունելով՝ կաղաչեմ • Կրախանձեմ, Ազգասէր Սուրբ Հայրք, մի յուսանալովք, մի վնասովք ձեռքերնեդ եկած բարիքն ընելու միշտ ազգիս, քանզի անհնար է որ այդչափ քրտանց սերմունքնիդ ապարդիւն մնան եւ քիչ ժամանակէն անոնց քաղցրութեան պտուղը ինքնին կճաշակէք : Միանգամայն կլնողրեմ որ այս գրուցածներս իյաւելուածոյ համակրութեան զգացմանցս համարիք եւ ոչ իմարդանաճոյ քաղաքավարութենէ. ինչ ընեմ, ցաւ է ինձի որ կամքս եւ կարողութիւնս զուգակշիռ չեն հաւասարել իմ ազգասէր փափագանացս զիյայնժամ առնելն ճշմարտեղջանելն Տեա ամենայնի, խորագրած երախտագիտութեամբ շնորհակալութիւն ընելով վասն հրատարակութեան դրկած հատուածոյս եւ անոնց ծախուց հատուցմանը պատրաստական մնալով՝ կաղաչեմ որ շնորհ ընէք դրկելու ինձի նաեւ գԱռաջին

եւ երկրորդ տարւոյ ազգօգուտ Աղաւնիները որպէսզի գրութիւնը ամբողջ ունենամ իմ պզտի գրանոցիս մէջ, զորոց վճարքն ալ յարզի Գործակալնուդ ձեռքը յանձնելու պարտաւորուելով՝ մնամ միշտ մեծարանաց համբուրիս :

Ազգասէր Սուրբ Հարցղ

Անկեղծ մտերմութեամբ բարեացակամ եւ խոնարհ ծառայ

ԳՕՄԻՍ ՅՈՎՀԱՆՆԷՍ Տ. ՉԱՐԱՆԵԱՆ.

ԳԵՐ. Տ. ՅՈՎՀԱՆՔ Վ. ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆԱՀԱՅՐ. — « Լրագրոյս 356 բույն մէջ Վանէն գրուած նամակներէ առնելով ծանուցեր՝ էինք Նարեկայ Վանուց Վանահայր արժանապատիւ Տ. Յովսէփ վարդապետին բրած երեւելի շինութիւններն ու բարեկարգութիւնները նոյն վանքին մէջ : Այս անգամ ուրիշ ճամակ մը ստացանք Նարեկայ գիւղին բնակչաց ստորագրութեամբ, որ աւելի մանրամասն տեղեկութիւններ կուտայ յիշեալ բարեջան եւ ուսումնասէր վարդապետին բրած յիշատակաց արժանի գործերուն վրայ :

Այս ազգասէր վարդապետը Նարեկայ վանքին առաջնորդ ըլլալէն առաջ՝ վանքը յետին խեղճութեան ու խանգարման վիճակի մէջ է եղեր : Կալուածներուն մեծ մասը Քիւրաթըն յափշտակած էին : Վանքին մէջ կան կարասի եւ եկեղեցւոյն մէջ զարդ չէր մնացած : Սուրբ տաճարը բռնեց եւ սարդերու ընդ եղած էր : Վանքին վրայ ալ մեծագումար պարտք դիւրուած էր : Ասանկ ողորմելի վիճակի մը մէջ էր վանքը երբոր Յովսէփ վարդապետը վանահայր կընտրուի : Իւր առաջին գործը կըլլայ վանքին յափշտակեալ կալուածները ետ դարձունել, որն որ շատ աշխատութեամբ վերջապէս գլուխ կհանէ. եւ զանոնք մշակել տալով՝ երկու տարուան մէջ վանքին պարտքերը տալէն ետեւ, պարիսպները ինձմանց կշինէ, ընդարձակ եւ գեղեցկաշէն դպրոց մը կկանգնէ ուր 29 աշակերտք ուսմունք կսովորին եւ զիշեր ցորեկ կկերակրին, հանդերձնին եւ ուրիշ ամեն պիտոյքնին ալ Վանահօրմէն հոգացաւով : Աշակերտաց ընթերցմանը համար փոքր բանգարան մը կանաճանէ պիտանի գիրքերով եւ լրագիրներով զարդարուած : Վանահօր եւ ուխտաւորաց սենեակներուն պէտք եղած կան կարասիները եւ հարկաւոր եղածին չափ անկողին կպատրաստէ : Իւր բնական գիւղացւոց ողորմելիները եւ անտերունջ ճանապարհորդները պատասպարելու եւ ձրի կերակրելու համար ընդարձակ անկեղանոց մը կշինէ : Այլ եւ ուխտաւորներն օրերով ձրի կերակրելու եւ ստակ չպահանջելը՝ այս Վանահօր օրովը միայն կտեսնուի : Այս զարմանալի շինութիւններն ու բարեկարգութիւնները քէ որ արժանահաւատ ճանապարհորդներու վկայութեամբ ստուգուած չըլլային՝ անհաւատալի պիտի բուռնէ մզի :

Երջանիկ կըլլար ազգերնիս քէ որ մեր ամեն վանքերն այս արժանապատիւ Յովսէփ վարդապետին պէս եռանդուն ազգասէր եւ առաքինի Վանահայրներ ունենային : (ՄԱՍԵԱ.)

Տ. ԱՆԳԵԼԻՍՍ ՓՈՓՈՎԻԶ ԲԺԻՇԿ : — « Կոստանդնուպոլսոյ հայազգի երեւելի բժիշկներէն մեծարգոյ Տօքթոր Անդրեաս Փոփովիլը 17/29 սեպտեմբերի իրիկուն Խապուդ վախճանեցաւ. յանկարծական ցաւալի մահուամբ, որուն պատճառ կճամարուի իւր երկար ժամանակէ իվեր ունեցած սրտի հիւանդութիւնը : Հանգուցեալ բժիշկն Անդրեաս Փոփովիլը՝ Աւստրիոյ Սուլթան քաղաքը ծնած էր 1805ին եւ իր կրթութիւնը եւ բժշկական ուսումը Վիեննայի համալսարանի մէջ բրած էր :

Իւր յիշատակը ազգիս մէջ անմոռաց պիտի մնայ յօրինած ու հրատարակած *Առուես երկացակեցութեան* անուն ընտիր գիրքովը՝ որ ամեն հասակի ու կարգի օգտակար տեղեկութիւն ու խրատներ կպարունակէ : (ՄԱՍԵԱ.)